

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՏԻԳՐԱՆ ԼԵՈՆԻԴԻ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԱՔԱՏԱՌ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ (XII-XIX ԴԴ.)**

Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան – 2026**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության  
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

**պ.գ.դ., պրոֆեսոր  
Կոստիկյան Քրիստինե Պետրոսի**

Պաշտոնական ընդհանխոսներ՝

**պ.գ.դ., պրոֆեսոր  
Տեր-Ղևոնդյան Վահան Արամի**

**պ.գ.թ.**

**Միրիջանյան Դիանա Հրաչյայի**

Առաջատար կազմակերպություն՝

**ՀՀ ԳԱԱ հնագիտության և  
ազգագրության ինստիտուտ**


Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թ.  
փետրվարի 27-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում  
գործող ԲԿԳԿ-ի Համաշխարհային պատմություն 006 մասնագիտական խորհրդում  
(հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2026 թ. հունվարի 26-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական  
քարտուղար՝

**պ.գ.թ., դոցենտ Ա. Փաշայան**



## ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետության տարածքում կան բազմաթիվ արաբատառ  
վիմական արձանագրություններ: Սրանք վաղ միջնադարից մինչև XIX դարը  
Հայաստան ներթափանցած ու բնակություն հաստատած և շատ դեպքերում հայ  
տեղաբնիկներին դուրս մղած մուսուլմանական տարրի հետքերն են: Բացի վիմական  
արձանագրություններից, Դվինում և այլ վայրերում հնագետների իրականացրած  
պեղումների արդյունքում հայտնաբերվել են խեցեղեն, ապակե և մետաղյա  
առարկաներ, որոնք պարունակում են արաբատառ գրություններ: Կան նաև, այսպես  
կոչված, կեղծ (պսևդո) արաբատառ գրություններ, որոնք կամ նմանակում են  
արաբական գիրը և կամ էլ օգտագործված են որպես զարդանախշեր: Այդ  
արձանագրություններից, առնվազն, արժեքավորները ուսումնասիրության կարիք  
ունեն, քանի որ Հայաստանի այլախեղ վիմական ժառանգության մի մասն են: Բացի  
այդ, դրանք ստեղծված են նաև որոշակի սոցիալ-մշակութային և պատմական  
համատեքստում: Սա նշանակում է, որ գրեթե ցանկացած արաբատառ  
արձանագրություն պատմական որևէ ժամանակաշրջանի, երբեմն՝ սոցիալական  
ազդեցության և տարաբնույթ գործընթացների արդյունք է:

Հայաստանի արաբական արձանագրությունների առաջատար մասնագետ  
Ալեքսանդր Խաչատրյանի «Դվին Հայաստանի արաբերեն վիմագրություն. VIII-XVI  
դդ. Պրակ Ա» աշխատության հրատարակությունից անցել է գրեթե չորս տասնամյակ:  
Այդ ընթացքում պարբերաբար հայտնաբերվում են նոր վիմական  
արձանագրություններ: Գիտնականի «Դվինում» ներառվել են միայն արաբերեն  
լեզվով արձանագրությունները: Դրանում տեղ չեն գտել պարսկերեն  
արձանագրությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ արաբերեն և պարսկերեն  
(որոշ դեպքերում էլ՝ թյուրքերեն) արձանագրությունները հանդիպում են կողք-կողքի:  
Այդ աշխատությունից հետո արաբատառ վիմագրությունների ոլորտը  
ուսումնասիրության կարիք էր զգում: Սերտորեն համագործակցելով մեծ գիտնականի  
հետ իր կենդանության օրոք՝ մենք որոշեցինք մեր հնարավորությունների  
սահմաններում շարունակել այդ կարևոր գործը: Ավելի քան երկու տասնամյակ  
Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում իրականացվել են արաբատառ  
արձանագրությունների որոնողական աշխատանքներ: Ատենախոսության մեջ  
ներկայացվում են մեր կողմից ուսումնասիրված, վերծանված, ճշգրտված երկու  
տասնյակից ավելի վիմագիր և խեցեղենի, ապակու ու մետաղյա իրերի վրա արված  
արձանագրությունները, որոնց դիտարկումը պատմամշակութային և սոցիալ-  
տնտեսական համատեքստում հնարավորություն է տալիս բացահայտել տվյալ  
պատմական ժամանակաշրջանին բնորոշ մի շարք առանձնահատկություններ:  
Հայտնաբերված արձանագրությունները լուսանկարվել, ուսումնասիրվել և  
հրատարակվել են տարբեր պարբերականներում: Այս գործում մեզ մեծապես աջակցել  
են ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության և

միջնադարի բաժնի, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի, նաև՝ Արևելագիտության ինստիտուտի գիտաշխատողները:

### **Թեմայի արդիականությունը**

Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանված արաբատառ արձանագրությունները ներկայացնում են մեր պետության պատմամշակութային ժառանգության կարևոր, սակայն համեմատաբար քիչ ուսումնասիրված հատվածը: Դրանք արժեքավոր սկզբնաղբյուրներ են, որոնք տեղեկություններ են հաղորդում XII–XIX դարերում մեր երկրի այս կամ այն հատվածում տեղի ունեցած սոցիալ-մշակութային, կրոնական, և այլ իրողությունների մասին: Չնայած վերջին տասնամյակներին հայկական վիճաբանության ուսումնասիրությունը զգալի առաջընթաց է արձանագրել, արաբատառ արձանագրությունները, հատկապես՝ նորահայտ նմուշները, հաճախ դուրս են մնացել գիտական շրջանառությունից:

Ատենախոսության թեման ունի գիտական և քաղաքական կարևորություն: Վիճական հուշարձանների, ինչպես նաև խեցեղենի, ապակու և մետաղյա իրերի վրա արաբական արձանագրությունների վերձանումը և համատեքստային քննությունը հնարավորություն է տալիս վեր հանել տվյալ ժամանակի սոցիալ-մշակութային և պատմական համատեքստը և արտացոլում են ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքի բազմամշակութային անցյալը՝ ի ցույց դնելով կապը իսլամական քաղաքակրթության հետ: Հայաստանի Հանրապետության տարածքում XII–XIX դարերով թվագրվող նորահայտ արաբատառ արձանագրությունների համալիր ուսումնասիրությունը կարևոր է ինչպես ազգային-պատմական ժառանգության ճանաչման և գիտական արժևորման, այնպես էլ պատմամշակութային փոխազդեցությունների համադրական ուսումնասիրության տեսանկյունից: Արաբատառ մշակութային ժառանգությունը կարևոր կամուրջ է իսլամական արաբական աշխարհի հետ նոր որակի հարաբերություններ մշակելու տեսանկյունից ևս:

### **Ատենախոսության թեմայի ժամանակագրական և աշխարհագրական սահմանները**

Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են XII–XIX դարերը, ինչը պայմանավորված է մեր կողմից ընթերցված նորահայտ արաբատառ արձանագրությունների ժամանակային միջակայքով՝ ամենահինից (XII դար) մինչև ամենանորերը (XIX դար): XIX դարի վերջը համընկնում է Հայաստանում (Երևանի նահանգում և հարակից շրջանների հայաբնակ տարածքներում) բնակվող մուսուլմանական համայնքի կողմից արաբատառ արձանագրությունների կիրառման վերջին ժամանակաշրջանի հետ: Աշխարհագրական սահմանները պարփակված են Հայաստանի Հանրապետության տարածքով:

### **Ատենախոսության գիտագործնական և կիրառական նշանակությունը**

Ատենախոսության մեջ արձարժվող թեմաները կարող են գործնական կիրառություն և նշանակություն ունենալ աղբյուրագիտության, պատմության, հնագիտության և այլ գիտակարգերում ուսումնասիրություններ կատարող մասնագետների համար:

Աշխատանքի վերջնարդյունքները կարող են շահեկանորեն օգտագործվել մասնագիտական դասախոսություններում, ուսումնամեթոդական ձեռնարկներում և դասագրքերում:

### **Ուսումնասիրության նպատակը և խնդիրները**

Ատենախոսության նպատակն է համակողմանի ներկայացնել և արժևորել Հայաստանի Հանրապետության տարածքում նախկին հետազոտողների կողմից չուսումնասիրված մուսուլմանական հուշարձանները որպես պատմական սկզբնաղբյուր: Այդ նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- ներկայացնել պատմական Հայաստանի (Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան) և Հայաստանի Հանրապետության տարածքում արաբատառ արձանագրությունների ընթերցման պատմությանը և արժևորել այն արդի գիտության համատեքստում,
- ամբողջացնել վերջին երկու տասնամյակի ընթացքում մեր կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում հավաքագրված, ուսումնասիրված և վերծանված վիճական և խեցեղենի, ապակու, մետաղյա իրերի վրա արված արաբատառ արձանագրությունները,
- ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքից հայտնաբերված արաբատառ արձանագրություն պարունակող հուշարձանները, դրանց ժամանակագրությունը, տեսակները և հնագրագիտական (պալեոգրաֆիկ) առանձնահատկությունները
- դիտարկել թե՛ նորահայտ, թե՛ արդեն հայտնի արաբատառ արձանագրությունների սոցիալ-մշակութային և պատմական համատեքստը:

### **Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը**

Մեթոդաբանության ընտրությունը պայմանավորված է ուսումնասիրվող թեմայի առանձնահատկություններով, որի հիմքում ընկած են պատմահամեմատական, աղբյուրագիտական, նկարագրական և բովանդակային վերլուծությունը: Արաբատառ արձանագրությունների մասին հիմնարար աշխատությունների ուսումնասիրության հիմքում ընկած է հետևյալ մեթոդաբանությունը՝ քայլերի հետևյալ հերթականությամբ.

1. Արձանագրության կամ գտածոյի/առարկայի կամ նրա պատկերի տեսողական գնում:
2. Արձանագրության լեզվի որոշում՝ արաբերեն, պարսկերեն, օսմաներեն և այլն:
3. Արձանագրության բովանդակության և թվականի (եթե կա) ընթերցում: Թվականի բացակայության պարագայում, կամ եթե այն քայքայված է անընթեռնելի լինելու աստիճանի, արձանագրությունը և համապատասխանաբար արձանագրություն կրող հուշարձանը կարելի է թվագրել մի շարք հանգամանքների զուգորդմամբ (ինչ լեզվով է գրված,

գրատեսակի որոշում (*բուֆի, նասիս, սուլուս* և այլն, խեցեղենի վրա կիրառվող տառատեսակ, հնագրագիտություն, պատկերագրությունը (եթե կա), արձանագրությունը կրող հուշարձանի գտնվելու վայրը, ուղեկցող հնագիտական նյութերը, այդ տեղանքի մասին պատմական տվյալների հայթայթումը աղբյուրներում և այլն:

4. Արձանագրության տիպաբաժանումը ըստ նշանակության և բովանդակության (շինարարական գրություն, տապանագիր, կրոնական բնույթի գրություն, նաև շինության նշանակությունը բացահայտող գրություն, խեցեղենի և մետաղա առարկաների վրա կիրառվող բառերի և արտահայտությունների ընթերցում):

#### Ուսումնասիրության արդի վիճակը և գրականության տեսություն

Հայաստանում արաբների հաստատման, Հայաստանի քաղաքներում բնակության պատմության մասին կարևոր սկզբաղբյուրներ են արաբ հեղինակներ ալ-Մուկադդասիի (X դար)<sup>1</sup>, Իբն Հաուկալի (X դար)<sup>2</sup>, Իբն ալ-Ասիրի (XIII դար)<sup>3</sup>, պարսիկ Նասիր Խոսրովի (XI դար)<sup>4</sup> աշխատությունների ընձեռած տեղեկությունները: Մանազկերտի ճակատամարտից հետո թյուրքական տարրի ներթափանցման պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրներ են հայ հեղինակներ Մատթեոս Ուտիայեցու (XII դար)<sup>5</sup>, Թովմա Մեծոփեցու (XV դար)<sup>6</sup>, Առաքել Դավրիժեցու (XVII դար)<sup>7</sup>, բյուզանդացի հեղինակներ Հովհաննես Սկիլիցեսի (XI դար)<sup>8</sup>, Աննա Կոմնենեի (XII դար)<sup>9</sup>, Միքայել Աստալիասեսի (XI դար)<sup>10</sup>, Նիկեյիոր Բրիեննիոսի<sup>11</sup> (տեղեկությունները վերաբերում են XI դարին) ընձեռած տեղեկությունները: Կարևոր

են նաև Միքայել Ասորու (XII դար)<sup>12</sup>, Գրիգոր Բար Հերբեոսի (Աբուլ Ֆարաբի)<sup>13</sup> (XII դար) երկերը: Հայկական լեռնաշխարհ, Իրան, Միջին Արևելքի այլ հատվածներ և Բյուզանդիա Սելջուկյանների ներթափանցման և հաստատման պատմության համար օգտագործել ենք նաև ալ-Բունդարիի (XIII դար)<sup>14</sup>, Իբն Բիբիի (XII դար)<sup>15</sup>, Սադր ալ-Դին Հուսայնիի «Ախբար ալ-Դաուլա ալ-Սալջուկիյա» (XIII դար)<sup>16</sup>, Սիբտ իբն ալ-Ջաուհիի (XIII դար)<sup>17</sup> տեղեկությունները:

Պատմական Հայաստանի (Այրարատ, Սյունիք, Վայոց ձոր, Արցախ, Գուգարք, Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան) ներառյալ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում արաբատառ արձանագրությունների ուսումնասիրության պատմության լուսաբանման համար հիմնական ուղեկիշ է ծառայել Ա. Խաչատրյանի «Դիվան Հայաստանի արաբերեն վիճագրության VIII-XVI դդ. Պրակ Ա»<sup>18</sup> ուսերենով հրատարակված կոթողային աշխատությունը: Նշված հատվածի համար օգտագործել ենք նաև Ղևոնդ Ալիշանի<sup>19</sup>, Նիկողայոս Մադի<sup>20</sup>, Մ. Բրոսեի<sup>21</sup>, Ն.Խանիկովի<sup>22</sup>, Մաքս վան Բերշեմի<sup>23</sup> և այլոց՝ տվյալ թեմային առնչվող աշխատությունները: Այս առումով կարևոր են նաև Նախիջևանի արձանագրությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող Վ. Սիսունի<sup>24</sup>, Վ.

<sup>1</sup> Al-Mokaddasi, *Descriptio Imperii Moslemici*, ed. M. J. de Goeje, *Bibliotheca Geographorum Arabicorum*, Vol. III, Lugduni Batavorum (Leiden): E. J. Brill, 1876, 496 p.

<sup>2</sup> Ibn Hauqal, *Viae et Regna: Descriptio ditionis moslemicae*, ed. M. J. de Goeje, *Bibliotheca Geographorum Arabicorum*, vol. 2, Lugduni Batavorum (Leiden): E. J. Brill, 1873, xxi + 406 p.

<sup>3</sup> Իբն ալ-Ասիր, թարգմ., առաջաբանը և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1981, 408 էջ:

<sup>4</sup> Насир-и Хусрау, Сафар-нама Книга Путешествия, перевод и вступительная статья Е.Э. Бертельса, Москва-Ленинград, 1933, 212 с.

<sup>5</sup> Մատթեոս Ուտիայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Հ.Քարթիկյան, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1991, 432 էջ:

<sup>6</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն: Աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի: Խմբ. Ա.Սահակյան, Երևան, «Մազադար», 1999 թ., 376 էջ:

<sup>7</sup> Պատմութիւն Առաքել Դավրիժեցույ, Վաղարշապատ, Տարսրան Մար Աթոռոյ Ա Էջմիածնի, 1896, 711 էջ:

<sup>8</sup> Հովհաննես Սկիլիցես, թարգմ. Քաղաքից, առաջաբան և ծանոթագր. Հ.Քարթիկյան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիա, Երևան, 1979, 488 էջ:

<sup>9</sup> Анна Комнина, Алексиада, Вступительная статья, перевод и комментарии В. Н. Любарского, Москва, Издательство "Наука", 1965, 688 с.

<sup>10</sup> Միքայել Աստալիասես, Պատմություն Թարսիստոսի քաղաքից, ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Երևան, 2015, 314 էջ:

<sup>11</sup> Nicephorus Bryennius, *Nicephori Bryennii Commentarii*, Edited by A. Heitsch, Bonn: Weber, 1836, 456 p.

<sup>12</sup> Michel le Syrien, *Chronique*, publiée pour la première fois et traduite en français par J.-B. Chabot, Ernest Leroux, Paris, 1899-1924 (4 vols. de texte syriaque et 1 vol. de traduction française).

<sup>13</sup> Bar Hebraeus. The Chronography of Gregory Abū'l Faraj, the Son of Aaron, the Hebrew Physician, Commonly Known as Bar Hebraeus, Translated by E. A. Wallis Budge. 2 vols. London: Oxford University Press, 1932, vol. 1- p. 646, vol. 2 – 458 p.

<sup>14</sup> al-Bundart, Qiwām ad-Dīn. Histoire des Seljoucides du Kerman, Iraq, Asie-Mineure, edited by M. Th. Houtsma, 3 vols., E. J. Brill, Leiden, 1886, vol 1 -318 p., vol. 2- 355 p., vol. 3 – 371 p.

<sup>15</sup> Ibn Bibi. Selçukname, Edited by Mukrimin H.Yinanç, Kitabevi Yayinlari, Istanbul 2015, 275 s.

<sup>16</sup> The History of the Seljuq State: A Translation with Commentary of the Akhbār al-dawla al-Saljuqiyya, C.E. Bosworth, translator and commentator. Routledge Studies in the History of Iran and Turkey. Milton Park, Abingdon, Oxon; New York: Routledge, 2011, 183 p.

<sup>17</sup> Sibṭ ibn al-Jawzī, Yūsuf b. Qizughlī (d. 654/1256). Mir' at al-zamān fi ta' rīkh al-a' yān. Vol. 8, Dā' irat al-Ma' arif al-' Uthmāniyya Hyderabad, 1951-52, 400 p.

<sup>18</sup> А.Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв, выпуск I, Ереван, Издательство АН Армянской ССР, 1987, 235 с.

<sup>19</sup> Ալիշան Ղ., Սիսական, Տեղագրություն Սիսեանց աշխարհի, Վենետիկ, Ա. Ղազար, 1893, 563 էջ:

<sup>20</sup> Н. Март, Реестр предметов древности. Анийская серия, №2, СПб, 1908, с. 46, ср. ЗВО, XIX СПб, 1909, 64 с.; Март Н., Ани, Книжная история города и раскопки на месте городища, Ленинград-Москва, Соцэкгиз, 1934, XII, [2], 1934, 133 с.

<sup>21</sup> М. Броссе, Разбор анийских надписей, Кавказ, 1852, №18-20.

<sup>22</sup> N.Khanikoff, Voyage à Ani, capitale de l'Arménie Bagratide, Revue archéologique, XV année, pt. II 1859, Paris, pp. 401-420.

<sup>23</sup> Max van Berchem, Arabische Inschriften aus Armenien und Diarbekir, Materialien zur Älteren Geschichte Armeniens und Mesopotamiens von C.F. Lehmann-Haupt, Abhandlungen der Königl. Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, 1907, 183 p.

<sup>24</sup> В.Сысоев, Нахичеван на Араксе и древности Нахичеванской АССР, Известия азомстариса, вып 4, Баку, 1929; В.Сысоев, Нахичеванский край (Нах. АССР), Известия азомстариса, вып 4, Баку, 1929;

Բարտոլդի<sup>25</sup>, Վ. Կրաչկովսկայայի, Ի. Կրաչկովսկու<sup>26</sup>, Ի. Ազիմբեկովի<sup>27</sup>, Ա. Ալեկսերազեի<sup>28</sup> հրատարակություններից: Արևմտյան Հայաստանի (Բարձր Հայք, Վասպուրական, Տուրուբերան) արաբատառ արձանագրությունների դիտարկման համար ուսումնասիրել ենք նաև այնպիսի թուրք հեղինակների աշխատությունները, ինչպիսիք են Ա.Քեմալին<sup>29</sup>, Ա. Բեյգուն<sup>30</sup>, Ռ. Ունալը<sup>31</sup>, Բ. Քարամաղարալին<sup>32</sup>, Մ. Ֆ. Քիրզիօղլուն<sup>33</sup>:

Ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում, ներառյալ Երևանի, Արագածոտնի մարզի միջնադարյան, Սյունիքի մարզի ուշմիջնադարյան արաբատառ արձանագրությունների ուսումնասիրության համար չափազանց կարևոր են Հ. Փափազյանի<sup>34</sup>, Ա. Խաչատրյանի<sup>35</sup>, Ա. Տեր-Ղևոնդյանի<sup>36</sup> վիճակագրական աշխատանքները:

Խոյակերպ տապանաքարերի երևույթի ուսումնասիրման համար օգտվել ենք ֆրանսիացի ճիզվիտ միսիոներ Ալեքսանդր դը Ռոդեսի գրառումներից<sup>37</sup>, ֆոն

<sup>25</sup> В. Бартольд, Персидская надпись на стене аниийской мечети Мануче, Сочинения, т. IV, М., 1966, с. 313-338.

<sup>26</sup> В. Крачковская, И. Крачковский, Из арабской эпиграфики в Ани (надпись на мечети Манучехра), «АН СССР – академик Н.Я. Марру», Москва-Ленинград, 1935, с. 671-695; В. Крачковская, О кувлической надписи на башне внешней стены города Ани, Folia Orientalia, с. XII, 1970, с. 103-112.

<sup>27</sup> И. Азимбеков, Мусульманские надписи в Тифлисе, Эривани, Нахичевани, Карабагларе и др., Известия Азкомстариса, вып. 4, Баку, 1929, с. 295-311.

<sup>28</sup> А. Алексерадзе, Надписи мавзолеев Юсуфа ибн Кусейра и Мумине Хатун в Нахичевани, Труды института истории им. А. Бакиханова, т. I, Баку, 1947, с. 76-89.

<sup>29</sup> Ali Kemal, Erzincan: Tarihi, coğrafi, içtimai, etnografi, idari, ihsâî tetkikat tecrübesi. İstanbul: Resimli Ay Matbaası., İstanbul, 1932; Şerif, Abdürrahim. Ahlat Kitabeleri, Hamit Matbaası, İstanbul, 1932.

<sup>30</sup> A. Beygu., Erzurum: Tarihi, Anıtları, Kitabeleri. İstanbul: Bozkurt Basimevi, 1936, 264 s.

<sup>31</sup> R. Unal, Monuments islamiques de la ville d'Erzurum et de sa region, Bibliotheque archéologique et historique d'Institut français d'archéologie s'İstanbul, t. XXII, Paris, 1968, 296 p.

<sup>32</sup> B. Karamağaralı, Ahlat mezar taşları, Güven Matbaası, Ankara, 1972, 284 s.

<sup>33</sup> M. Kirzioğlu, Kars Tarihi. Cilt I, İşil Matbaası, İstanbul, 1953, 608 s.

<sup>34</sup> А. Папазян, Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд, Ближний и Средний Восток, Москва, 1962, с. 68-75; А. Папазян, Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике, Историко-филологический журнал, N 4, 1983, Ереван, с. 121-123. А. Папазян, Возвращаясь к «дешифровке» урутской эпитафии, ИФЖ, N 4, 1987, Ереван, с. 171-179;

<sup>35</sup> А. Хачатрян, Нижнеталинская арабская надпись 570/1174г., Историко-филологический журнал, N 4, 1979, с. 188-198; А. Хачатрян, К интерпретации арабских надписей Армении (VIII-XVI вв.), Историко-филологический журнал, N 4, 1989, Ереван, с. 159-160; А. Хачатрян, К расшифровке и интерпретации некоторых арабских надписей Армении (XV-XVI вв.), К освещению проблем истории и культуры Кавказской Албании и Восточных провинций Армении, т. 1, Изд-во Ереванского университета, Ереван, 1991, с. 255-275; А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв., выпуск I, Издательство АН Армянской ССР, Ереван, 1987, 235 с.

<sup>36</sup> Ա. Տեր-Ղևոնդյան, Ջաբարիայի և Իվանեի արաբատառ արձանագրությունը Անեբերդում, Պատմաքրատագրական հանդես, 1, 1971, էջ 185-188: Ա. Տեր-Ղևոնդյան, Հաղթանի արաբերեն արձանագրությանը և Բազրատունի թագավորների տիտղոսները, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1, 1979, էջ 73-80:

<sup>37</sup> Divers voyage et missions du P. Alexander de Rhodes en la Chine et autres royaumes de l'Orient avec son retour en Europe par Perse et l'Arménie, Lille, 1884

էլիվալդի<sup>38</sup>, Ա. Միլխյոնֆերի<sup>39</sup>, Ժ. Պերրոյի և Շ. Շիպյեի<sup>40</sup>, Ա. Մաժնիկովի<sup>41</sup>, Ի. Ռոստոմովի<sup>42</sup>, Վ. Բախմանի<sup>43</sup>, Է. Բրաունի<sup>44</sup>, Հենրի Լինչի<sup>45</sup>, Ֆ. Օսվալդի<sup>46</sup>, Ի. Մեշչանինովի<sup>47</sup>, Վ. Սխոսկի<sup>48</sup>, Ե. Պչեխնայի<sup>49</sup> և ուրիշների հրապարակումներից: Հայ գիտնականների աշխատանքներից, որոնք խոյակերպ տապանաքարերի վերաբերյալ տվյալներ են պարունակում, ուսումնասիրել ենք Ղևոնդ Ալիշանի<sup>50</sup>, Քաջբերունու (Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի)<sup>51</sup>, Ա. Կրոյրի<sup>52</sup>, Ա. Տեր-Ավետիսյանի<sup>53</sup>, Գ. Հովսեփյանի<sup>54</sup>, Ա. Բարխուդարյանի<sup>55</sup>, Ա. Այվազյանի<sup>56</sup>, Ա. Կարապետյանի<sup>57</sup> աշխատանքները: Դվինից պեղված խեցեղենի, ապակու և մետաղյա առարկաների վրա արաբատառ արձանագրությունները ուսումնասիրելու համար օգտվել ենք

<sup>38</sup> Eichwald C. E. von, Reise auf dem Caspischen Meere und in den Kaukasus: unternommen in den Jahren 1825-1826., J. G. Cotta, Stuttgart, Tab. II, Bilder 1, 2, 1837, 477 S.

<sup>39</sup> A. Milchhöfer, Widderdenkmäler aus Phrygien und Armenien, Archäologische Zeitung 41, Erstes Heft, 1883, Berlin, S. 263.

<sup>40</sup> G. Perrot G. et Ch. Chipiez, Histoire de l'art dans l'antiquité, v. V., Paris, 1890, pp. 169-170.

<sup>41</sup> С. Мажинов, Памятники древности города Самшвилде, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), Выпуск XIII, Типография Императорской Академии наук, С-Петербург, 1892, 64с.

<sup>42</sup> И.П Ростомов, Ахалкалакский уезд в археологическом отношении, Сборник материалов для описания местностей и племен Кавказа (СМОМПК), Выпуск. II, 1898, с. 47, 53, 64, 96.

<sup>43</sup> W. Bachmann, Kirchen und Moscheen in Armenien und Kurdistan, Breitkopf & Härtel Leipzig, 1913, S. 6.

<sup>44</sup> E. G. Browne, A Year Amongst the Persians, Macmillan and Co., London, 1893, pp. 31-33

<sup>45</sup> H. Lynch, Armenia, Travels and Studies, vol. 2, Macmillan and Co., London, 1901, pp. 233-234.

<sup>46</sup> F. Oswald, A Treatise on the Geology of Armenia London, 1906, pp. 35-36, 239.

<sup>47</sup> И. Мещанинов, Археологическая экспедиция в Нагорный Карабах и Нахичеванский край, Сообщения, Академии истории материальной культуры, Издательство Академии истории материальной культуры, Ленинград, 1926, т. I, с. 23, рис. 13.

<sup>48</sup> В. Сысоев, Нахичеванский край, – Нах. ССР. Отчет о поездке летом 1927 года, Известия Азкомстариса, вып. 4, тетрадь 2, Баку, 1929, с. 186.

<sup>49</sup> Е.Г. Пчелина, Армянские памятники на территории Азербайджанской ССР, Труды Отдела Востока, т. III, Издательство Академии наук СССР, Ленинград, 1940, сс. 243-256.

<sup>50</sup> Ղ. Ալիշան, Հայոց հավատը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 85:

<sup>51</sup> Քաջբերունի (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), Ճանապարհորդական նկատողություններ, Էդիտ Պրինտ, Երևան, 2003, էջ 11:

<sup>52</sup> Ա. Կրոյր, Հին Ջուղա, ՊԲՀ 4 (39), 1967, էջ 174-176:

<sup>53</sup> Ս. Թեր-Ավետիսյան, Գործ Ջուղա, Издательство АН Грузинской ССР, Тифлис, 1937, сс. 126, 222, рис. 48, 49.

<sup>54</sup> Հ. Հովսեփյան, Խաղրակյանը կամ Պողոթյանը պատմության մեջ, Պատմագիտական ուսումնասիրություններ, մասն առաջին, Վարդաշապատ, 1928, էջ 47:

<sup>55</sup> ԴՀԿ III, էջ 199: ԴՀԿ IV 112: Ա. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1935, էջ 74, նկ. 39:

<sup>56</sup> Ա. Այվազյան, Ջուղա, Երևան, 1984, էջ 34: Ա. Այվազյան, Նախիջևանի կրթողային հուշարձանները ու պատկերաքանդակները, «Հայաստան» հրատ, Երևան, 1987, էջ 22-23; 42; 53-54; 77-78; 109; 117:

<sup>57</sup> Ա. Կարապետյան, Բուն Աղվանքի հայկական վիճակները, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1997, էջ 23:

Կ.Ղաֆադարյանի, Ա.Քալանթարյանի, Հ. Ջանփոլադյանի աշխատություններից<sup>58</sup>: Թուրք հեղինակներից Փոքր Ասիայում խոյատապաններին նվիրված Ա. Չայի գիրքը հատուկ ուշադրության է արժանի, քանի որ վերջինս փորձում է խոյակերպ տապանաքարերը վերագրել միայն թյուրքական ժողովուրդների մշակույթին<sup>59</sup>:

Հայաստանի Հանրապետության տարածքում նորահայտ արաբատառ արձանագրությունների մասին համապատասխան գլուխը շարադրված է ատոնախոսի դաշտային աշխատանքների և հրատարակված հոդվածների հիման վրա<sup>60</sup>:

#### **Ուսումնասիրության գիտական նորույթը**

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում ավելի քան երկու տասնյակ վիմական, խեցեղենի և մետաղյա գտածոների վրա արաբատառ արձանագրությունների վերձանություններ, որոնք վերաբերում են XII-XIX դարերին: Վիմական արձանագրությունները ներկայացված են ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի՝ շեշտադրում կատարելով նորահայտ նյութերի քննության վրա: Դրանք են 2001 թ. հայտնաբերված Իլխանության շրջանի Երևանի մոնոլիթական դամբարանի հիջրայի 720 թվականի (1320-1321 թթ.) արձանագրությունը, Սիսիանի երկրագիտական թանգարանի բակում ցուցադրված մուսուլմանական խոյակերպ տապանաքարերի տապանագրերը, Բջնիի ամրոցից պեղված XII դարի (հիջրայի 570-ականներ կամ 590-ականներ՝ 1174թ.-ով, կամ 1193 թվականով) մեր կողմից թվագրված պարսկերեն արձանագրությունը, Եղեգիսում հայտնաբերված Թաջ ալ-Դին իբն Իզ ալ-Դինի տապանաքարը, Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում գտնված Ահմադ իբն Կասիմի տապանաքարը, Ագարակածորի կամրջի սալիկի վրայի պարսկերեն արձանագրությունը,

<sup>58</sup> Sbu, օրինակ, Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պղումները I, Հայկական ՍՍԲ Գիտությունների ակադեմիայի հնագիտական արշավախմբի 1937-1950 թթ. աշխատանքների արդյունքները, Երևան, 1952: Ղաֆադարյան Կ., Քալանթարյան Ա., Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները (1973-1980 թթ.), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2002 (այնուհետև՝ Կ.Ա.Ղաֆադարյան, Ա.Ա. Քալանթարյան, 2002): Դվին IV, Դվին քաղաքը և նրա պեղումները (1981-1985), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2008:

<sup>59</sup> A.Çay, Anadolu'da Türk Damgasi, Koç Heykel-Mezar Taşları ve Türkler'de Koç-Koyun Meselesi, Ankara, 1983, s. 39 (այսուհետև՝ A.Çay, Anadolu'da Türk Damgasi).

<sup>60</sup> T. Mikayelyan, Armenian Ram-Shaped Stones, Armenian Journal of Near Eastern Studies (AJNES), v. IV, issue 1, 2009, pp. 148-161: S. Միքայելյան, Ստրուկ-վարձկանության ծագման ակունքների որոշ ասպեկտների շուրջ, Արևելագիտական ժողովածու, հ. XVII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 1999, էջ 141-150: S. Միքայելյան, Լեռնարոտ գյուղի (Արագածոտնի մարզ) մուսուլմանական քրանցքի պարսկերեն արձանագրությունը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXXVI, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2007, էջ 279-282: S. Միքայելյան, Բջնիի ամրոցից XII դարի նորահայտ պարսկերեն արձանագրությունը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXXI/1, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2019, էջ 323-332: S. Միքայելյան, Ագարակածորի կամրջի պարսկերեն արձանագրությունը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», (XXXII/2), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2019, էջ 338-348:

Արագածոտնի մարզի Լեռնարոտ գյուղի մերձակայքում գտնվող քրանցքի, նույն մարզի Բագմադքյուր գյուղի թաքիայի (շիա իսլամում սուֆիների, հավատացյալների, ծիսական արարողությունների համար նախատեսված հավաքատեղի) և Դվինից հայտնաբերված խեցեղենի, ապակու և մետաղյա գտածոների վրայի արաբատառ արձանագրությունները:

Բոլոր նորահայտ արձանագրությունները դիտարկվում են նաև սոցիալ-մշակութային և պատմական համատեքստում: Ատոնախոսության մեջ ներկայացվող հին՝ արդեն գիտական շրջանառության մեջ դրված, սակայն գիտական հանրությանը քիչ հայտնի արձանագրությունները դիտարկվում և ուսումնասիրվում են նոր լույսի ներքո՝ սոցիալ-մշակութային և պատմական տեսանկյունից:

#### **Աշխատանքի պաշտոնական հավանությունը**

Ատոնախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Աղբյուրագիտության բաժնի կողմից: Ատոնախոսության դրույթները և առանցքային խնդիրները ատոնախոսի կողմից ներկայացվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում: Թեմայի վերաբերյալ ատոնախոսը հրատարակել է 12 հոդված:

#### **Աշխատանքի կառուցվածքը**

Ատոնախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, նկարների հավելվածից, ռուսերեն ու անգլերեն լեզուներով ամփոփումներից:

Ներածության մեջ հիմնավորված է ուսումնասիրության թեմայի արդիականությունը, ներկայացված են ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, ուսումնասիրության արդի վիճակը, գիտական նորույթը, ներկայացվում է աշխատանքի պաշտոնական հավանությունը, օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատոնախոսության առաջին գլուխը վերնագրված է «Հայաստանի արաբատառ արձանագրությունների ծագումը, տեղագրությունը և ուսումնասիրության պատմությունը», որում քննության են առնվում Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանված արաբատառ արձանագրությունների ծագման, տարածման և ուսումնասիրման պատմության հիմնախնդիրները, ներկայացվում են ինչպես գիտական ուսումնասիրման ընթացքը, այնպես էլ այն պատմական միջավայրը, որի պայմաններում ձևավորվել է արաբատառ վիմական ժառանգությունը Հայաստանում:

Առաջին ենթագլխում «Հայաստանի Հանրապետությունում արաբատառ արձանագրությունների ուսումնասիրության պատմությունը և արժևորումը», ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում արաբատառ արձանագրությունների ուսումնասիրության պատմությունը՝ XIX դարից մինչև մեր օրերը: Վերլուծվում են հայ և օտարազգի հետազոտողների աշխատանքները,

արժևորվում և արդի գիտության համատեքստում դիտարկվում են այդ բնագավառում կատարված ուսումնասիրությունները: Երկրորդ ենթագլխում՝ «**Մուսուլմանական տարրի ներթափանցումը պատմական Հայաստանի տարածք և արաբատառ արձանագրությունների առաջացումը**», քննության է առնվում մուսուլմանական տարրի ներթափանցման պատմությունը Արևելյան և Արևմտյան Հայաստանի տարածք՝ սկսած VIII դարի արաբական արշավանքներից և Արմինիա վարչաքաղաքական միավորի հաստատումից մինչև հետագա ժամանակաշրջաններում (սելջուկյան, մոնղոլական, Սեֆյան, Ղաջարական իշխանությունների ժամանակաշրջաններ), երբ ձևավորված քաղաքական, վարչական և կրոնական իրողությունները նպաստել են մուսուլմանական բնակչության թվաքանակի աճին: Տույց է տրվում, որ մուսուլմանական տարրի ամրապնդումը ուղեկցվել է հայկական բնակչության աստիճանական թվաքանակի նվազումով, որը պայմանավորված է եղել զանգվածային արտագաղթով, տնտեսական և վարչական ճնշումներով, կրոնական հալածանքներով, ինչպես նաև դավանափոխության գործընթացներով: Երրորդ ենթագլխում՝ «**Հայաստանի Հանրապետության տարածքում մուսուլմանական հուշարձանները և արաբատառ արձանագրությունները**», անդրադարձ է կատարվում Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանված մուսուլմանական հուշարձաններին և դրանց վրա առկա արաբատառ արձանագրություններին: Քննարկվում են հուշարձանների տիպաբանական առանձնահատկությունները, տարածքային բաշխվածությունը և դրանց գործառույթները սոցիալ-կրոնական միջավայրում: Ընդգծվում է, որ արաբատառ արձանագրությունները տվյալ հուշարձանների ժամանակագրության, պատկանելության և Հայաստանի Հանրապետության տարբեր վայրերի ստույգ ժամանակաշրջանների պատմական համատեքստի ճշգրտման կարևոր աղբյուր են:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «**Հայաստանի Հանրապետության տարածքում նորահայտ վիմագիր արաբատառ արձանագրություններ**», նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված նորահայտ վիմագիր արաբատառ արձանագրությունների ներկայացմանն ու աղբյուրագիտական վերլուծությանը: Գլխում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում մի շարք արձանագրություններ, որոնք մինչ այդ կամ ամբողջությամբ անհայտ էին գիտությանը կամ հայտնի էին առանց ընթերցման և մեկնաբանության: Առաջին ենթագլխում՝ «**Նոր ընթերցված արաբատառ վիմական արձանագրությունները**», ուսումնասիրվում են նորահայտ արաբատառ վիմական արձանագրությունները՝ ըստ տարածքային սկզբունքի: Առանձին ենթաբաժիններում ներկայացվում են Երևանում (մոնղոլական դամբարան՝ հայերեն, պարսկերեն և արաբերեն արձանագրություններով՝ 1320թ.), Սյունիքում (Սիսիանի երկրագիտական թանգարանի խոյակերպ տապանաքարերի արաբերեն տապանագրերը XVI, XVI, XIX դդ.), Վայոց Ձորի (Թաջ ալ-Դին իբն Իզ ալ-Դինի տապանաքարը՝ ենթադրաբար XIV դար, Ագարակաձորի կամուրջ՝ ենթադրաբար հիջրայի 1172՝ 1758թ.), Գեղարքունիքի

(Ահմադ իբն Կասիմի տապանաքարի տապանագիրը՝ XVI դարի կեսերից մինչև նույն դարի վերջը), Կոտայքի (Բջնիի ամրոցից գտնված պարսկերեն) և Արագածոտնի (Լեռնարոտ գյուղի մերձակայքի ջրանցքի հիմնադրման պարսկերեն, Բաղմաղբյուր գյուղի թաքիա կառույցի արաբերեն) մարզերում հայտնաբերված արձանագրությունները: Յուրաքանչյուր արձանագրություն քննության է առնվում իր գտնվելու տեղանքի, հուշարձանի, պահպանվածության աստիճանի, հնագրագիտական առանձնահատկությունների, լեզվական կառուցվածքի և բովանդակության տեսանկյունից: Կատարված են արձանագրությունների ընթերցումներն ու հայերեն թարգմանությունները: Վերջիններս դիտարկված են ժամանակագրական և պատմական համապատասխան համատեքստում: Երկրորդ ենթագլխում՝ «**Ատենախոսի կողմից ընթերցված նորահայտ արաբատառ վիմական արձանագրությունների տիպաբաժանումը ըստ նշանակության և բովանդակության**», տրվում է նորահայտ արձանագրությունների տիպաժանումը ըստ բովանդակային խմբերի՝ շինարարական, տապանագրեր, կրոնական, խառը, ոչ հստակ բովանդակությամբ: Երրորդ ենթագլխում՝ «**Նոր ընթերցված արձանագրությունների հնագրագիտությունը**», կատարվում է նորահայտ արձանագրությունների հնագրագիտական վերլուծությունը: Քննության են առնվում թե՛ արդեն ուսումնասիրված արաբերեն արձանագրությունների կիրառված գրատեսակները (Ա. Խաչատրյանի աշխատության օրինակով), թե՛ մեր կողմից ընթերցված նորահայտ արձանագրությունների գրատեսակները՝ *նասիս*, վիմական *նասիս*, *սուլս* և *մուհակակ* գրատեսակների տարրերով, *վաղ թա՛լիկ*, *նասթա՛լիք*: Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «**Նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները խեցեղենի, ապակու և մետաղյա առարկաների վրա**»: Այն նվիրված է Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված խեցեղեն, ապակե և մետաղյա առարկաների վրա պահպանված նոր ընթերցված արաբատառ արձանագրությունների ուսումնասիրմանը: Գլխում ներկայացված նյութը ընդլայնում է Հայաստանի արաբատառ աղբյուրների շրջանակը՝ ի ցույց դնելով, որ արաբերեն գրավոր մշակույթը կիրառվել է ոչ միայն վիմական հուշարձանների, այլև խեցեղենի, ապակե և մետաղյա առարկաների վրա: «**Նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները խեցեղենի և ապակու վրա**» վերնագրով առաջին ենթագլխում ուսումնասիրվում են Դվին քաղաքում հայտնաբերված խեցեղեն և ապակե իրերի վրա պահպանված նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները: Նշվում է, որ Դվինում հայտնաբերվել են նմանատիպ քաղմաթիվ առարկաներ, որոնց վրա արձանագրությունները հիմնականում արաբերեն են՝ իսլամական աշխարհում կավե իրերի վրա լայնորեն տարածված ձևաբանական և բովանդակային ավանդույթի համապատասխան: Արձանագրությունների բովանդակությունը, որպես կանոն, կրում է բարեմաղթանքային բնույթ և ուղղված է առարկայի տիրոջը՝ ներառելով օրհնաբանական և բարեկեցություն մաղթող ձևակերպումներ, ինչպիսիք են. օրինակ,

«օրինություն» بركة կամ السعادة البركة الاقبال الكرامه «Երջանկություն, խաղաղություն, օրինություն, հաջողություն, պատիվ/արժանապատվություն» և հարակից արտահայտությունները: Վերլուծության արդյունքում ցույց է տրվում, որ Դվինում հայտնաբերված խեցեղեն և ապակե իրերի մի մասը, մեծ հավանականությամբ, տեղական արտադրության է: Այդ հանգամանքը հիմնավորվում է արաբական գրի նմանակմամբ և Դվինում ու հարևան տարածաշրջաններում գտնված այլ արաբատառ նյութերի հետ համեմատությամբ: Միաժամանակ արձանագրվում է, որ որոշ առարկաներ, ըստ ամենայնի, ներմուծված են եղել Իրանի, և հնարավոր է՝ նաև Իրաքի արհեստագործական կենտրոններից, ինչի մասին վկայում են ինչպես ոճական, այնպես էլ հնագրագիտական առանձնահատկությունները: «Ապակու և խեցեղենի վրա նոր ընթերցված արաբատառ արձանագրությունների հնագրագիտությունը» վերնագրով երկրորդ ենթագլխում ուսումնասիրվում է խեցեղենի, ապակե առարկաների արաբերեն արձանագրությունների հնագրագիտությունը (պալեոգրաֆիա): Նշվում է, որ ինչպես այլուր, այնպես էլ Դվինի գտածոների վրա կիրառվել է «խեցեղենային ձեռագիր/կուրսիվ» («керамический курсив») գրատեսակը, որը տարբերվում է սովորական քուֆի գրատեսակից, ծաղկող քուֆի, ինչպես նաև այսպես կոչված կեղծ (պսևդո) քուֆի գրատեսակը: Առանձնանանում է Երևանի Մանկական այգու տարածքում գտնված Ղաջարական հարստության Ֆաթի-Ալի Շահի շահի (1772-1834) զինանշանով սպիտակ և կապույտ սպասքը, որի գրատեսակը նախ է՝ մուհակակ ձեռագրի տարրերով: Երրորդ ենթագլխում՝ «Նոր ընթերցված արաբատառ արձանագրությունները մետաղյա առարկաների վրա», ուսումնասիրվում են Դվինից գտնված մետաղյա իրերը, որոնք ևս արտադրվել են տեղում, կամ ներմուծվել Միջին Արևելքից, հավանաբար Իրանից: Սրանք են՝ բրոնզե խնկամանը (XI-XII դդ.)՝ الغزالد գրությամբ, որը մեր կարծիքով الغزالد «հավիտենական փառք» բառակապակցության կրճատված տարբերակն է, պղնձե թասը՝ պարսկերեն արձանագրությամբ (XIX դար), Սուբհանվերդիի կնիքը (XVII-XIX դդ.), բրոնզե մատանին՝ պարսկերեն բարեմաղթանքով և الملك «ալ-մալիք» բառը պարունակող մատանին (ենթադրաբար XI-XIII դդ.): Նշվում է նաև, որ մետաղյա առարկաների վրայի գրատեսակները անկյունային կամ պարզ նասխ է:

**Եզրակացության** մեջ ամփոփված են ատենախոսության հիմնական արդյունքները: Ըստ այդմ՝

- Նորահայտ արձանագրությունների գիտական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թվով 24 վիմական, խեցեղեն, ապակե և մետաղյա առարկաների վրա առկա արաբատառ արձանագրություններից 11-ը վիմական են, 13-ը՝ խեցեղեն, ապակե, մետաղյա առարկաների վրա: Վերջինից և ուսումնասիրված նորահայտ արձանագրությունների ժամանակագրությունը շատ լայն է՝ XII-XIX դարեր, դրանք աշխարհագրորեն ընդգրկում են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք

Երևանը, Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի և Արագածոտնի մարզերը: Խեցեղեն, ապակե և մետաղյա առարկաները պեղվել են հիմնականում Դվինից:

- Արձանագրությունների լեզվական վերլուծությունը ցույց է տալիս, որ նորահայտ վիմական արձանագրությունների ճնշող մեծամասնությունը (9-ը) արաբերեն է (տապանագրեր, արձանագրություններ խեցեղենի, ապակու, մետաղյա առարկաների վրա), մինչդեռ 3-ը՝ պարսկերեն (շինարարական արձանագրություններ, խառը բովանդակությամբ Բջնիի արձանագրությունը): Խեցեղենի, ապակու և մետաղյա իրերի վրա առկա արձանագրությունների դեպքում ևս գերակշռում է արաբերենը (12), իսկ պարսկերեն արձանագրությունների թիվը 4-ն է:

- Արձանագրությունների հնագրագիտական վերլուծության արդյունքում պարզվել է, որ արաբերեն և պարսկերեն վիմական արձանագրությունների մեծ մասը կատարված է *վիմական նասխ* գրատեսակով: Երեք դեպքում արձանագրությունները պարունակում են *սուլս* գրատեսակի տարրեր, մեկ դեպքում ամբողջությամբ քանդակված են *սուլսով*, իսկ մեկ պարսկերեն արձանագրություն իրականացված է *նասպալիք* գրատեսակով: Խեցեղենի, ապակու և մետաղյա իրերի վրա արձանագրություններից չորսը գրված են *քուֆի* գրատեսակով, մեկ դեպքում առկա է *ծաղկող քուֆի* (խեցեղենային *քուֆի* կամ խեցեղենային կուրսիվ), երեք առարկա պարունակում է *կեղծ քուֆի*՝ զարդանախշերի վերածված գրանշաններով: Մեկ մետաղյա առարկայի վրա արձանագրությունը կատարված է *նասխ* գրատեսակով: Պարսկերեն արձանագրությունները հիմնականում գրված են *նասխով*, մեկ դեպքում՝ *մուհակակ* գրատեսակի տարրերով:

- Արձանագրությունների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ նորահայտ վիմական արձանագրություններից 6-ը տապանագրեր են: Դրանք են.

- Թաջ ալ-Դին իբն Իզ ալ-Դինի տապանագիրը (Եղեգիս), այն, ամենայն հավանականությամբ կարելի է թվագրել մոնղոլական (իլխանական) դարաշրջանով (1256-1335թթ.)

- Ահմադ իբն Կասիմի տապանաքարը Գեղարքունիքի Մարտունի քաղաքում (XVI դար)

- խոյակերպ տապանաքարերի վրայի արձանագրությունները, մասնավորապես՝ Սիսիանի երկրագիտական թանգարանի բակում ցուցադրված խոյակերպ տապանաքարերի (Սաֆար-Ղուլիի (հիջրայի 993/1585թ), Մուհամմադ իբն Իսքանդարի (հիջրայի 1010/1602թ.), Իսկանդար իբն [...դր] (հիջրայի 1109/1697-98թթ.), Ամր իբն Աբդի (հիջրայի 1315/1897թ.) տապանագրերը:

- 3-ը շինարարական բնույթի՝

- Երևանի մոնղոլական դամբարանի եռալեզու արձանագրությունը (1320-1321 թթ. հայերեն, պարսկերեն, արաբերեն)

- Ազարկաձորի կամուրջի պարսկերեն արձանագրությունը (մեր կարծիքով՝ հիջրայի 1172 կամ 1758 թ. կամրջի վերանորոգման մասին)

- Լեռնարոտի ջրանցքի պարսկերեն արձանագրությունը (ջրանցքի կառուցման մասին հիջրայի 1274 կամ 1858 թվականին)

1-ը կրոնական բնույթի՝ Արագածոտն մարզի Բազմադքյուր գյուղի թաքիայի արձանագրությունը (XIX դար կամ XX դարի սկիզբ):

1-ը խառը, ոչ հստակ՝ Բջնիի հիջրայի 570-ականների և կամ 590-ականների (1174 կամ 1193 թվական) արձանագրությունը, որը ամենայն համավանությամբ Բջնիի ամրոցում իրանական ռազմական ներկայության վկայությունն է:

• Արձանագրությունների վերլուծությունը թույլ է տալիս կատարել նաև որոշ պատմական և սոցիալ-մշակութային բնույթի դիտարկումներ և եզրահանգումներ: Դիցուք, տապանագրերը վկայում են համապատասխան տարածքներում մուսուլման բնակչության առկայության մասին, որոնց առանձնահատկություններից (խոյտապաններ) ելնելով, կարելի է փաստել, որ Սյունիքի մուսուլմանական բնակչության որոշ մասը վարել է քոչվորական կյանք: Եղեգիսում Թաջ ալ-Դին իբն 'Իզ ալ-Դինի տապանաքարի չափերը, արձանագրությունը, դրա մեկուսացած տեղադրությունը, կերտման ժամանակաշրջանը՝ XIV դար, կարող է մատնանշել ննջեցյալի բարձր սոցիալական դիրքը և իլխանական վերնախավին պատկանելը: Միևնույն իլխանական վերնախավի ներկայություն կարելի է ենթադրել նաև Երևանում, այս դեպքում ելնելով շինարարական բնույթի Երևանի մոնղոլական դամբարանի եռալեզու արձանագրության ընձեռած տվյալներից: Շինարարական բնույթի արձանագրություններից Ագարակաձորի կամրջի վերանորոգման մասին արձանագրության վերձանումը հուշում է, որ կամրջի վերանորոգման փաստը՝ XVIII դարում, կարող է վկայել վերջինիս առևտրային ճանապարհի կարևոր հանգույց լինելու հանգամանքը վայոցձորյան հատվածում: Մինչդեռ, Լեռնարոտի ջրանցքի վերաբերյալ արձանագրությունը փաստում է 1858 թ. այդ դժվարամատչելի տեղանքում ջրանցքի կառուցման մասին: Իսկ Բազմադքյուր գյուղում շիա մուսուլմանական կառույցի՝ թաքիայի առկայությունը մինչև XIX դարի վերջը կամ XX դարի սկիզբը, ցույց է տալիս այդ վայրում շիա մուսուլման բնակչության ներկայության մասին: Խառը բնույթի՝ Բջնիի հիջրայի 570-ականների և կամ 590-ականների (1174 կամ 1193 թվական) արձանագրությունը, որը պարունակում է «խֆահսալար» եզրը և վերջինիս համադրումը տվյալ ժամանակաշրջանում Անիում Շադդադյանների տիրապետության, Թալինի ենթաշրջանի Դաշտադեմի ամրոցի միևնույն Շադդադյանների արաբերեն արձանագրության հետ թույլ է տալիս ենթադրել Բջնիի ամրոցում ևս իրանական ռազմական ներկայության մասին:

• Պատկերագրական և բովանդակային վերլուծությունը, մի կողմից, բացահայտում է նորահայտ արաբատառ արձանագրություններ կրող հուշարձանների սերտ կապը Արևմտյան Հայաստանի (Բարձր Հայք, Վասպուրական, Տուրքերան) և Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող այլ մուսուլմանական հուշարձանների հետ (օրինակ Որոտնի (Որատնավանի) տապանաքարերի), իսկ մյուս կողմից՝ վկայում է հայկական արվեստի ազդեցության մասին դրանց ձևավորման վրա (Գեղարքունիքի Մարտունի քաղաքում հայտնաբերված Ահմադ իբն Կասիմի տապանաքարի պատկերագրությունը հար և նման է այդ տարածաշրջանների XVI դարի հայկական տապանաքարերի ձևավորմանը):

• 1979 թ. Ա.Խաչատրյանի ուսումնասիրություններից շուրջ 42 տարի անց Որոտնի (Որոտնավանի) գերեզմանոցի կրկնակի հետազոտությունը ցույց տվեց, որ նրա կողմից հրատարակված մուսուլմանական գերեզմանոցի բոլոր տապանաքարերը (բացի խոյտապաններից) պահպանվել են տեղում, սակայն գտնվում են ոչ բարվոք վիճակում: Դաշտային ուսումնասիրությունների և վերը նշված հեղինակի տվյալների համադրությամբ կազմվել է գյուղի մուսուլմանական տապանաքարերի համակարգված ցանկը: Տապանաքարերի տապանագրերի գիտական բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք, մեծ հավանականությամբ, պատկանել են իսլամ ընդունած հայերին: Այդ եզրակացությունը հիմնավորվում է ինչպես Օրբելյանների շրջանում տարածված անձնանունների, այնպես էլ իսլամական տապանագրային ավանդույթին ոչ բնորոշ տարրերով, իսկ «Ալլահ, Մուհամմադ, Ալի» արտահայտությունները ցուցիչ են, որ հավատափոխ եղած հայերը և նրանց ժառանգները հարել են իսլամի շիա ուղղությանը:

Իսեցեղեն, ապակե և մետաղյա առարկաներն աչքի են ընկնում բարձր գեղարվեստական որակներով: Նշված առարկաների արձանագրությունների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ դրանք արտադրվել են Դվինում (արաբական գրի նմանակում) կամ ներմուծվել Իրանից և կամ էլ՝ Իրաքից:

• Ընդհանուր առմամբ, ուսումնասիրությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա են զգալի թվով իսլամական հուշարձաններ, որոնք մեր երկրի բազմաշերտ պատմական և մշակութային ժառանգության անբաժանելի մասն են: Այս հանգամանքը վկայում է օտար՝ մուսուլմանական տարրի ներկայության, Հայաստանի Հանրապետության տարածքների նվաճման գործընթացների մասին, ինչը միաժամանակ Հայաստանի և իսլամական քաղաքակրթության միջև ձևավորված խոր և բազմաբովանդակ կապերի ապացույցն է: Հայաստանի իսլամական ժառանգությունը կարևոր աղբյուր է երկրի պատմական տարրեր շրջափոխելի ու զարգացումների, ինչպես նաև առանձին ժամանակաշրջանների սոցիալ-մշակութային միջավայրի գիտական ուսումնասիրության համար:

#### **Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝**

1. Микаелян Т., Арабские надписи, найденные с раскопок Двина, Scientia 3, The Third International Scholarly Conference, Challenges and Tendencies in the Humanities, Program & Papers, Tbilisi, 2023, cc. 74-81.
2. Միքայելյան Ս., Մահմեդական ծագման հայ անձնանուններ միջնադարում, Հայոց լեզվի պատմության հիմնախնդիրներ, Միջազգային գիտաժողովի նյութեր (Երևան, 2023, նոյեմբերի 2-3), ՀՀ ԳԱԱ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ԳԱԱ Լեզվի ինստիտուտի հրատարակչություն, Երևան, 2023, էջ 151-152,

3. Mikayelyan T., Persian as A Language of Medieval Epigraphic Inscriptions of Armenia, Հայաստան-Իրան. Պատմական անցյալը և ներկան, Միջազգային գիտաժողովի նյութեր, Հոդվածների ժողովածու, Երևան, 2022, pp. 320-333.
4. Микаелян Т., Персидская надпись агаракадзорском мосту, Труды международной научно-практической конференции, посвященной 30-летию независимости Республики Казахстан «Гуманитарные науки в эпоху глобализации: исследования и решения», Шымкент, 2021, сс.167-170.
5. Микаелян Т., Обзор арабписьменных (тюркоязычных) эпиграфических памятников на территории Республики Армения, Тюркология, Научный центр Международного казахско-турецкого университета имени К.А.Ясави, Казахстан, Туркестан, №3 (59), 2012, сс. 8-16.
6. Mikayelyan T., Armenian Ram-Shaped Stones, Armenian Journal of Near Eastern Studies (AJNES), v. IV, issue 1, 2009, pp. 148-161
7. Միքայելյան Տ., Խոյակերպ տապանաքարեր Սիսիանից, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2004, էջ 534-539:
8. Միքայելյան Տ., Նորահայտ միջնադարյան տապանաքար Մարտունուց, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XII, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2003, էջ 226-233:

TIGRAN LEONID MIKAYELYAN  
**NEWLY DISCOVERED ARABIC-SCRIPT INSCRIPTIONS IN THE TERRITORY OF THE  
 REPUBLIC OF ARMENIA IN THE SOCIO-CULTURAL AND HISTORICAL CONTEXT  
 (12TH-19TH CENTURIES)**

**The dissertation is submitted for pursuing the Scientific Degree of the Candidate of Historical Sciences in the field of "Historiography, Source Studies" 07.00.05. The defense of the dissertation will take place on February 27, 2026, at 12:00 at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.**

**SUMMARY**

The territory of the Republic of Armenia preserves a substantial corpus of Arabic-script epigraphic inscriptions. These inscriptions constitute tangible traces of the Muslim presence that penetrated from the Early Middle Ages and persisted until the late 19th century, establishing settlements and, sometimes, displacing the indigenous Armenian population. Beyond stone inscriptions, archaeological excavations in sites such as Dvin, Ani, and other locations have yielded ceramic, glass, and metal objects bearing Arabic-script inscriptions. Additionally, so-called pseudo-Arabic inscriptions - imitations of Arabic script or purely decorative renditions are attested. Among these, the most significant inscriptions warrant systematic scholarly investigation, as they form an integral component of Armenia's multilingual epigraphic heritage. Moreover, these inscriptions were produced within specific socio-cultural and historical contexts, indicating that nearly every Arabic-script inscription reflects a defined historical period, and in certain instances, the influence of particular social or political phenomena.

The **Introduction** of the dissertation provides a justification for the study, delineates the scientific novelty of the research, articulates its theoretical and methodological framework, and offers a comprehensive review of the primary and secondary sources examined.

The first chapter entitled "**The History and Evaluation of the Study of Arabic-Script Inscriptions in the Republic of Armenia**", presents the historiographical development of research on Arabic-script inscriptions in Armenia from the 19th century to the present. The works of Armenian and foreign scholars are critically assessed, highlighting the principal research targets.

The second chapter, "**Newly Discovered Epigraphic Arabic-Script Inscriptions in the Territory of the Republic of Armenia**", is dedicated to the presentation and source-critical analysis of recently identified Arabic-script inscriptions. For the first time, a series of inscriptions are introduced into scholarly discourse - some previously unknown in their entirety, and others known only without transcription, translation, or interpretation.

The third chapter, "**Newly Deciphered Arabic-Script Inscriptions on Ceramic, Glass, and Metal Objects**", investigates newly read inscriptions found in Armenia preserved on pottery, glassware and metalware. The findings significantly expand the corpus of Arabic-script sources, demonstrating that Arabic writing tradition was employed not solely in

monumental epigraphy, but also on movable ware and other objects. These data provide critical insights into the diffusion of Arabic-script culture, its interaction with local traditions, and its broader socio-cultural significance.

Finally, the **Conclusion** synthesizes the principal outcomes of the research, situating the newly studied inscriptions within the broader framework of Armenia's historical and cultural development. The study confirms that Arabic-script inscriptions constitute a vital dimension of Armenia's multi-layered epigraphic heritage, reflecting periods of foreign domination and persecution while simultaneously bearing testimony to sustained cultural interaction between Armenia and the Islamic world. As such, these inscriptions represent an indispensable source for the study of the country's social, cultural, and historical dynamics.

ТИГРАН ЛЕОНИДОВИЧ МИКАЕЛЯН  
НОВЫЕ АРАБОПИСЬМЕННЫЕ НАДПИСИ НА ТЕРРИТОРИИ РЕСПУБЛИКИ  
АРМЕНИЯ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНОМ И ИСТОРИЧЕСКОМ КОНТЕКСТЕ  
(XII-XIX ВВ.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук  
по специальности 07.00.05 – «Историография, источниковедение».

Защита состоится 27 февраля 2026 года в 12:00 на заседании  
специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА,  
действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г.

Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

На территории Республики Армения имеется множество арабописьменных эпиграфических надписей. Эти надписи представляют собой материальные свидетельства присутствия мусульманского населения, проникшего с раннего средневековья и до XIX века, иногда сопровождавшегося вытеснением коренного армянского населения. Помимо эпиграфических памятников, археологические раскопки в Двине и других местах выявили предметы из керамики, стекла и металла, содержащие арабские графические надписи. Кроме того, имеются так называемые псевдоарабские надписи, представляющие собой либо имитацию арабского письма. Среди этих источников наиболее значимые требуют систематического научного исследования, поскольку они являются неотъемлемой частью многоязычного эпиграфического наследия Армении. Важно отметить, что надписи создавались в определенных социокультурных и исторических условиях, что позволяет рассматривать практически каждую надпись как отражение конкретного исторического периода и, в ряде случаев, воздействия определенных социальных и исторических факторов.

**Введение** диссертации обосновывает актуальность и научную значимость исследования, формулирует теоретико-методологическую основу работы, а также содержит систематический обзор использованных источников и критический анализ существующей литературы.

Первая глава, озаглавленная «**История изучения и оценка арабоязычных эпиграфических надписей на территории Республики Армения**», раскрывает историю исследований арабских надписей в Армении с XIX века до современности. Внимательно рассматриваются работы как армянских, так и зарубежных исследователей, выявляются основные направления научного анализа.

Вторая глава, «**Новые эпиграфические арабописьменные надписи на территории Республики Армения**», посвящена источниковедческому анализу недавно выявленных эпиграфических надписей. Впервые в научный оборот вводится ряд эпиграфических памятников, ранее полностью неизвестных науке либо известных без расшифровки, перевода и интерпретации.

Третья глава, «**Новые прочитанные арабписьменные надписи на предметах из керамики, стекла и металла**», посвящена анализу новых надписей на предметах материальной культуры – керамической утвари, предметах из стекла и металла. Представленный материал существенно расширяет корпус арабязычных источников Армении, демонстрируя, что арабская письменная традиция использовалась не только на камне, но и на утвари, а также прикладных предметах.

В **Заключении** подводятся итоги исследования, подчеркивается, что новые арабписьменные надписи являются частью эпиграфического, а также исторического и культурного наследия Армении. Исследование указывает, что несмотря на то, эти надписи отражают периоды иностранного господства и притеснения, в то же время свидетельствуют о вековом культурном взаимодействии между Арменией и исламским миром. Арабписьменные надписи представляют собой ценный источник для изучения социально-культурной среды и истории страны.